



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 16 ԱՊՐԻԼ, 2018

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.
քու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:
Ամբողջութեամբ մաքրէ ՚ս իմ անօրէնութենէս. եւ իմ մեղքես ՚ս սրբէ:
Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքես չ'ելլեր:
Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր,
գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:
Ուստի ներումիդ ցօղով սրբէ ՚ս, եւ պիտի մաքրուիմ,
լուա ՚ս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:
Ցնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,
եւ տառապած ոսկորներս պիտի ցնծան:
Նկատի մի՛ առներ մեղքերս, ներէ բոլոր յանցանքներս:
Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ո՛վ Աստուած,
նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:
Ներկայութենէդ մի՛ զրկեր ՚ս, Տէր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չլքէ ՚ս:
Փրկութեանդ ցնծութիւնը Կուր ինձի՛
եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս:
Որպէսպի անօրէններուն սորվեցնեմ քու կամքդ,
եւ մեղաւորները քեզի դառնան:
Բաց իմ շրթներս, ո՛վ Տէր, թող բերանս քեզի օրհնութիւն երգէ:
Եթէ զոհ կամենայիր՝ պիտի մաքուցանէի, բայց ողջակէզ դուն չես ուկեր:
Ուկած զոհդ զղջումով լի հոգի մըն է, ո՛վ Աստուած,
հետեւաբար մի՛ մերժեր զղջումնալից եւ ընկճուած իմ սիրտս:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՐԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ
ԳԼՈՒԽ 2:1-2

ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ԲԱՐԵՆՕՍԸ (2:1-2)

Յովհաննէս Առաքեալ իր այս նամակը կը գրէ այնպիսի հայրական սիրով ու հոգածութեամբ, որ կ'ըսէ. «Որդեակներս, սիրելիներ, զաւակներս», ինչպէս Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Իմ ծագուկներս էք դուք, բայց ահա դարձեալ մօր մը պէս երկունքի ցաւ կը քաշեմ ձեզի համար, մինչեւ որ Քրիստոսի հարազատ պատկերը դառնաք» (Գաղ 4:19): Այս բոլորը ուրիշ բան չեն եթէ ոչ հարազատութիւն, կապուածութիւն: Այս նամակը կը գրէ, որպէսզի յիշեցնէ այս բաները, որ մեղքի մէջ չիյնան, իսկ եթէ պարտաւորութիւն ունենան, կը վստահեցնէ, որ Հօր Աստուծոյ քով բարեխօս ունինք միակ Արդարը՝ Յիսուս Քրիստոսը: Յիսուս Քրիստոսն է մեր մեղքերը քառող Զոհը, որ ինքզինք մաքուցեց՝ մեր մեղքերը սրբելու համար, ոչ թէ միայն մեր, այլ ամբողջ աշխարհին մեղքը (2:1-2):

Այս նոյն արքայապարտութիւնը Քրիստոս քանի մը առիթներով պիտի յիշեցնէր Իր աշակերտներուն ըսելով. «Արթուն եւ պարտասար եղէք, որպէսզի մեղքի մէջ չիյնաք» (Մարթ 26:41): Պետրոս Առաքեալ կ'ըսէ. «Արթուն եւ պարտասար եղէք, որովհետեւ ձեր թշնամին՝ Սատանան առիծի պէս մոնչելով կը շրջի եւ կլկելու համար մէկը կը փնտռէ» (Ա Պետր 5:8): Իսկ Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ով որ կը կարծէ թէ կանգուն է՝ թող զգոյշ ըլլայ որ չիյնայ» (Ա Կորնթ 10:12): Այս հասարակումները, մեզ չեն յուսահարեցնէր կամ մեր սրբերը կասկածով կը լեցնեն, այլ ընդհակառակը՝ մեզի առաւել եւս առիթ կու տան արթուն մնալու եւ պարտասար: Իսկ միւս կողմէ կայ նաեւ յոյսը եւ վստահութիւնը Աստուծոյ փութ խոստումին. «Եթէ խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէք՝ թէ Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն» (Ա Յովհ 1:9) պիտի ներէ, որովհետեւ ունինք միակ Արդար Բարեխօսը՝ Յիսուս Քրիստոսը: Ուրեմն Քրիստոսի բարեխօսութիւնը մեր մեղքերուն քառութեան եւ թողութեան համար է: Իսկ ինչ կը վերաբերի ընդհանրապէս բարեխօսութեան, այս պարագային՝ սուրբերո՞ւ: Յարակութիւն մը պէտք է ընել: Յակոբոս Առաքեալ գեղեցիկ կերպով կը ներկայացնէ ըսելով. «Ձեր մեղքերը իրարու խոստովանեցէք եւ իրարու համար աղօթեցէք, որպէսզի բժշկուիք. որովհետեւ արդարի մը աղօթքը ազդեցիկ է եւ մեծապէս կ'օգնէ» (Յակ 5:16): Ուրեմն, սուրբերու բարեխօսութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ իրարու աղօթակից ըլլալու: Սուրբերը իրենք չեն մեր մեղքերու քառութեան համար բարեխօսը, այլ՝ աղօթակից են սուրբերուն հետ: Աստուածաշունչին մէջ ունինք քանի մը փարբեր օրինակներ, որոնք ցոյց կու տան այդ երեսը. օրինակ. Աբրահամ երբ բարեխօսեց Սողոմ Գոմորի համար: Հարիւրապետը բարեխօսեց իր ծառային բժշկութեան համար: Յայրոս բարեխօսեց իր մէկ հարիկ աղջկան համար:

Այսպէս մէկ այլ ուրիշ երեւոյթ կայ: Աստուած Իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ, եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ (Մարթ 5:45), ինչպէս պիտի ըսէ Քրիստոս: Սա ցոյց կու տայ Աստուծոյ օրհնութիւնը բոլորին անխափիր, բայց կայ մէկ այլ ուրիշ օրհնութիւն մը, որ յարուստ է միայն Աստուծոյ ընտանիքի անդամներուն, արդարութիւն, սրբութիւնը, մնայուն բարեխօսութիւնը եւ խաղաղութիւնը, որ կու տայ Իր զաւակներուն: Հերաքրքրական է, որ յունարէն փարբերակը բարեխօսին, *paraclate* բառն է, այն նոյն բառը, որ Յովհաննէս Առաքեալ կը նշէ իր իսկ Աւետարանին մէջ երբ Քրիստոս կ'ըսէ. «Եւ ես Հօրս պիտի աղաչեմ որ ուրիշ Մխիթարիչ մը փայ ձեզի, որպէսզի յաւիտեան ձեզի հետ ըլլայ: Անիկա Սուրբ Հոգին է, որ ճշմարտութիւնը կը յայտնէ» (Յովհ 14:16): Սա ցոյց կու տայ Որդիին եւ Սուրբ Հոգիին միջեւ միութիւնն ու համարեութեանակից ըլլալու հանգամանքը: Որդին մեր Բարեխօսն է Հօրը քով մեզի համար, իսկ Սուրբ Հոգին բարեխօս է մեր մէջ այսպէս երկրի վրայ:

Քրիստոսի բարեխօսութիւնը, պարզ սովորական բարեխօսութիւն չէ, այլ որպէս միակ Արդարը, որ կը նշանակէ մեզ համար կը բարեխօսէ արդարութեամբ եւ ողորմութեամբ: Արդարութեամբ, որովհետեւ Ինք Օրէնքի լուծին փակ մտաւ, եւ ամբողջութեամբ մեղքի լուծը իր վրայ վերցուց, եւ Իր մահով խաչափայտին վրայ քանուցեց: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Որովհետեւ Աստուած Ինք էր որ ձեզ բերաւ Քրիստոսի միացուց, եւ մենք Քրիստոսով ճանչցանք Աստուծոյ իմաստութիւնը եւ գրանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը» (Ա Կորնթ 1:30): Սա կը նշանակէ, Աստուծոյ նախախնամութեամբ, Հայրական սիրով ու հոգածութեամբ Ինք յանձն առաւ մեր մեղքերը քառելու համար զրկելու Իր Միածինը, մեր Տէրն ու Փրկիչ Յիսուս Քրիստոսը, որ եկաւ աշխարհը մեր մեղքերը քառող Զոհ, որ ինքզինք մաքուցանեց՝ սիրայօժար: Յովհաննէս Սկրիպիչ կ'ըսէ. «Ահաւասիկ Աստուծոյ Գառնուկը, որ

աշխարհի մեղքը կը վերցնէ» (Յովի 1:29): Հին Կրակարանին մէջ կը կարդանք, որ Աստուած փարբեր փարբեր գոհեր ճշդաձ էր մեղքերու քաւութեան համար, բայց այդ գոհերը դաստիարակչական էին, գալիքին շուքը, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ (Եբր 10:1-10), որովհետեւ «ցուլերու եւ նոխազներու արիւնը բնաւ չի կրնար մեղքերը ջնջել», անոր համար ալ «Աստուած բոլոր նախկին գոհերը կը վերցնէ եւ անոնց փեղ Քրիստոսի գոհը կը հաստատէ: Եւ որովհետեւ Յիսուս Քրիստոս Աստուծոյ կամքը կատարեց, Իր մարմինն անկնրկնելի գոհագործումովը մենք սրբուցեանք մեր մեղքերէն»: Ոչ միայն մեր, այլ նաեւ ամբողջ աշխարհի մեղքերը սրբելու համար, եթէ երբեք խոստովանին, որովհետեւ այդ ներումը մեքենական չէ, այլ խոստովանութիւն կ'ենթադրէ:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հոսկանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*